

Տիպ` դատական ծանուցումներ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդված

Քաղաքացիական գործ

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր ՊՈԱԿ-ի «Խաղարկային դատարանի» որոշում

հայցադիմումը վարույթ ընդունելու և գործը դատաքննության նշանակելու մասին

«Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի» խաղարկային դատարան

Հայցվոր` Աբրահամյան Տիգրան

Պատասխանողներ` «Մխիթար Սեբաստացի կրթահամալիր» ՊՈԱԿ-ի խորհուրդ, միջին և ավագ դպրոցների ղեկավարներ

Ըստ «Մխիթար Սեբաստացի կրթահամալիր» ՊՈԱ կազմակերպության ներքին կարգապահական կանոնների 9.18 կետի, յուրաքանչյուր աշակերտ պարտավոր է մասնակցել ուսումնական պարապմունքի, այդ թվում ուսումնագիտահետազոտական ճամբարին երկու շաբաթով` ամեն կիսամյակի ավարտին: Սակայն ուսումնահետազոտական ճամբարի ժամանակ սովորողները գրեթե ոչինչ չեն անում, բացի ժամանակ վատնելուց: Սովորողները դիտում են ինչ-որ ֆիլմեր, զբաղվում արհեստով և այլն: Սակայն նշված աշխատանքներն ուսումնական չեն, այսինքն իրենցով գիտելիք չեն փոխանցում սովորողներին:

Ըստ «Երեխայի իրավունքների» մասին ՀՀ օրենքի երկրորդ գլխի 19-րդ հոդվածի արգելվում է երեխայի ներգրավվումը այնպիսի աշխատանքում, որը կարող է խոչընդոտել երեխայի զարգացմանը և կրթություն ստանալուն:

Ընդ որում մարդու օրվա ռեժիմը պիտի բաղկացած լինի գեղագիտական, ֆիզիկական և մտավոր աշխատանքներով: 2014 թվականի ուսումնական ճամբարի [աշխատակարգում](#) նշված են ճամբարի աշխատանքների ուղղությունները: Սակայն այնտեղ գրված ուղղություններից ոչ մեկն իրականությանը չի համապատասխանում, այսինքն այդ ուղղություններով աշխատանքներ չեն տարվում, բացի «մարզական պարապմունքներ» և «Միջավայրի բարելավման ուսումնական նախագծեր» ուղղություններ: Ստացվում է, որ այս պարապմունքը չի համապատասխանում մարդու ներդաշնակ զարգացման պահանջներին:

Ըստ երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի 29-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի` Երեխայի կրթությունը պետք է ուղղվախ լինի երեխայի

անհատականության, տաղանդի և մտավոր ու ֆիզիկական ունակությունների զարգացմանը դրանց լրիվ ծավալով՝

Ըստ երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին մասի՝ մասնակից պետությունները ճանաչում են երեխայի հանգստի և ժամանցի, իր տարիքին համապատասխան խաղերին ու զվարճալի միջոցառումներին և մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու և արվեստով զբաղվելու իրավունքը

Իսկ ըստ երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի 31-րդ հոդվածի 2-ին մասի՝ մասնակից պետությունները հարգում և խրախուսում են երեխայի՝ մշակութային և ստեղծագործական կյանքին բազմակողմանիորեն մասնակցելու իրավունքը և նպաստում են մշակութային ու ստեղծագործական գործունեության, հանգստի և ժամանցի համար համապատասխան և հավասար հնարավորությունների տրամադրմանը:

Իմ հայցապահանջն է չկիրառել ուսումնական պարապմունքի այս ձևը, կամ համապատասխանեցնել մարդու ներդաշնակ զարգացման պահանջներին:

Տիգրան Աբրահամյան, Միջին Դպրոց 9-1 դասարան